

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	7
3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման	7
3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման	10
3.2. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման	13
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	15
5. ԱՄՓՈՓՈՒՄ	18


1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2023 թվականին համաշխարհային տնտեսությունում և ՀՀ հիմնական գործընկեր երկրներում գրանցվել է համեմատաբար ցածր տնտեսական աճ. համաշխարհային տնտեսությունում 2023թ. աճը եղել է 3.1%՝ նախորդ տարվա 3.5%-ի դիմաց: Եվրագոտում արձանագրվել է տնտեսական աճի ավելի զգալի դանդաղում՝ հիմնականում պայմանավորված սպառողական թույլ պահանջարկով, էներգակիրների բարձր գների երկարաձգված ազդեցությամբ, ինչպես նաև մշակող արդյունաբերության և գործարար թույլ ակտիվությամբ: Առաջատար տնտեսությունների կենտրոնական բանկերի կողմից իրականացվող զսպող դրամավարկային քաղաքականության արդյունքում նկատվել է գնաճի տեմպերի դանդաղում, սակայն այն շարունակել է բարձր մնալ սահմանված թիրախներից: Մասնավորապես, ԱՄՆ-ում և Ռուսաստանում գնաճը շարունակել է մնալ թիրախից էականորեն բարձր մակարդակում, իսկ եվրագոտում տարեվերջին աստիճանաբար մոտեցել է սահմանված 2% թիրախին:

ՀՀ տնտեսական զարգացումները 2023թ. հիմնականում պայմանավորված են եղել 2022թ. բարձր աճի հիմքում ընկած գործոնների ազդեցությունների պահպանմամբ, որոնք, սակայն, թուլացել են, և արդյունքում տնտեսական աճի տեմպը դանդաղել է: Միևնույն ժամանակ, առաջ են եկել տնտեսական աճը արագացնող նոր գործոններ: Մասնավորապես, տնտեսական աճն արագացնող գործոններն են եղել պետական բյուջեից կապիտալ ծախսերի և շարունակվող բնակարանաշինության բարձր աճերը, Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների տնտեսական ազդեցությունները, ինչպես նաև նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճը: Տարվա ընթացքում, հաշվի առնելով տնտեսական զարգացումների ընթացքը, տնտեսական աճի կանխատեսումը վերանայվել է դեպի վերև՝ 7.0%-ից մինչև 7.4%, սակայն, վերը նշված ոսկերչական գործունեության կտրուկ ակտիվացման պայմաններում, փաստացի տնտեսական աճը եղել է ավելի բարձր՝ 8.7%:

Տնտեսական աճին առավելապես նպաստել է ծառայությունների աճը՝ շուրջ 6.1 տոկոսային կետով: Տնտեսության մյուս ճյուղերը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական աճին (շինարարության նպաստումը կազմել է 1.1, իսկ արդյունաբերության նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ): Ի տարբերություն նախորդ տարիների՝ գյուղատնտեսություն ոլորտը նույնպես աճ է գրանցել՝ տնտեսական աճին նպաստելով 0.02 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճը, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ:

Կանխատեսված ցուցանիշը հանդիսանում է 2023թ. պետական բյուջեի հիմքում ընկած կանխատեսումը, իսկ վերանայվածը՝ 2024թ. պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական սցենարում 2023թ. սպասումն է:

Արդյունաբերությունում 2023թ. գրանցվել է 4.1% թողարկման աճ՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ), որն էլ իր հերթին պայմանավորված է եղել ոսկերչական գործունեության՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների կտրուկ աճով: Մշակող արդյունաբերության աճին հիմնականում հակազդել են հիմնային մետաղների և սննդամթերքի արտադրությունը (նպաստումները՝ համապատասխանաբար -2.5 և -2.0 տոկոսային կետ)՝ պայմանավորված հիմնականում Սոթքի հանքի շահագործման դադարեցմամբ, դրամի արժևորմամբ, ինչպես նաև Լարսի անցակետի բնականոն գործունեության պարբերական խաթարումներով:

«Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ենթաճյուղը նվազել է՝ հակազդելով արդյունաբերության ճյուղի աճին (նպաստումը՝ 1.2 տոկոսային կետ): Ենթաճյուղի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման նվազմամբ, որի հիմնական պատճառներից է հանդիսացել Սոթքի հանքի շահագործման դադարեցումը:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ճյուղի ավելացված արժեքն աճել է շուրջ 2.9%-ով, սակայն համախառն արտադրանքի իրական մակարդակի փոփոխություն տեղի չի ունեցել: Ճյուղին հիմնականում նպաստել է բուսաբուծության աճը, իսկ անասնաբուծությունը նվազել է:

Շինարարության ճյուղում գրանցված 14.8% աճը պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով, որի հիմնական շարժիչ գործոնը բնակարանային շինարարության ծավալների աճն է, որին նպաստել է

հիպոթեքային վարկերի տոկոսավճարների՝ եկամտահարկից վերադարձման պետական աջակցության ծրագիրը:

Ծառայություններն աճել են 10.3%-ով՝ հիմնականում պայմանավորված «տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 6.4 տոկոսային կետ), «տրանսպորտ» (նպաստումը՝ 2.0 տոկոսային կետ), ինչպես նաև «կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 1.8 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճերով: Ճյուղի աճի վրա բացասաբար է ազդել միայն ֆինանսական և ապահովագրական գործունեության նվազումը (նպաստումը՝ 2.1 տոկոսային կետ), որը պայմանավորված է եղել բանկերի գործունեության նվազմամբ: Վերջինս տեղի է ունեցել ենթաճյուղի 2022 թվականի բարձր աճի բազայի վրա՝ որպես արտարժույթի ներհոսքից ոչ տոկոսային եկամուտների նվազման հետևանք: Առևտրի 25.7% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 20.0 տոկոսային կետ):

Ստորև ներկայացված են մակրոտնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների միտումները 2019-2023 թվականներին:

Աղյուսակ 1. Հիմնական մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշները

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ. պետական բյուջե, օրենք / ուղերձ	2023թ. Փաստ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,543.3	6,181.9	6,991.8	8,501.4	9,317.9	9,502.8
ՀՆԱ-ի իրական աճ, %	7.6	-7.2	5.8	12.6	7.0	8.7
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.1	1.8	6.9	8.0	5.0	2.8
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	0.7	3.7	7.7	8.3	3.6	-0.6
Գնաճ (միջին), %	1.4	1.2	7.2	8.6	5.6	2.0
Գործազրկության մակարդակը	18.3	18.2	15.5	13.0	-	12.6
1 շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար ¹	4,597	4,269	4,685	6,661	7,212	8,168
Հիմնական միջոցներում ներդրումներ / ՀՆԱ, %	15.8	17.8	21.2	20.3	20.4	20.8
Արտահանում / ՀՆԱ, %	42.5	30.2	36.1	51.4	41.1	58.4
Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ, %	-7.1	-4.0	-3.5	0.8	-5.7	-2.1

¹ Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կանխատեսումներում հաշվարկվել է՝ հիմք ընդունելով տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը:

Հարկաբյուջետային ցուցանիշներ (մլրդ դրամ)						
Պետական բյուջեի եկամուտներ	1,565.5	1,560.7	1,683.8	2,063.1	2,302.0	2,358.8
Հարկային եկամուտներ	1,464.3	1,385.2	1,586.9	1,926.0	2,203.7	2,221.9
Պետական բյուջեի ծախսեր	1,629.4	1,894.6	2,004.3	2,242.6	2,591.0	2,547.6
Ընթացիկ ծախսեր	1,437.1	1,668.5	1,788.0	1,862.2	2,043.3	2,075.1
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	192.3	226.2	216.3	380.4	547.7	472.6
Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորում	63.9	334.0	320.5	179.5	289.0	188.9
ՀՀ կառավարության պարտք	3,277.3	3,923.9	4,209.8	3,969.7	4,625.0	4,571.9
Հարկաբյուջետային ցուցանիշները (ՀՆԱ-ի նկատմամբ %)						
Պետական բյուջեի եկամուտներ	23.9	25.2	24.1	24.3	24.7	24.8
Հարկային եկամուտներ	22.4	22.4	22.7	22.7	23.7	23.4
Պետական բյուջեի ծախսեր	24.9	30.6	28.7	26.4	27.8	26.8
Ընթացիկ ծախսեր	22.0	27.0	25.6	21.9	21.9	21.8
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	2.9	3.7	3.1	4.5	5.9	5.0
Պետական բյուջեի պակասուրդ	1.0	5.4	4.6	2.1	3.1	2.0
ՀՀ կառավարության պարտք	50.1	63.5	60.2	46.7	49.8	48.1

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2023 թվականին սպասվածից ավելի բարենպաստ մակրոտնտեսական ցուցանիշների արձանագրման պայմաններում պետական բյուջեի փաստացի եկամուտները նույնպես գերազանցել են նախապես պլանավորված մակարդակը: Այսպես, ընդհանուր եկամուտները կազմել են 2,358.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.3%-ով, իսկ բյուջեի ճշտված պլանի համեմատ գերակատարվելով 0.1% (հաստատված բյուջեի պլանի համեմատ գերակատարումը՝ 2.5%):

Եկամուտների կազմում ճշտված պլանի համեմատ գերակատարվել են նաև պաշտոնական դրամաշնորհները և ոչ հարկային եկամուտները՝

համապատասխանաբար 6.3%-ով և 3.3%-ով: Սակայն առաջինի դեպքում նախնական պլանը տարվա ընթացքում ճշգրտվել է դեպի ներքև, մինչդեռ ոչ հարկային եկամուտների դեպքում՝ դեպի վերև: Բյուջեով հաստատված պլանի նկատմամբ պաշտոնական դրամաշնորհները թերակատարվել են 23.9%-ով, իսկ ոչ հարկային եկամուտները գերակատարվել են 52.6%-ով:

Հարկային եկամուտները 2023թ. նույնպես աճել են բարձր տեմպով՝ 15.4%-ով, սակայն ճշտված պլանի համեմատ փոքր-ինչ թերակատարվել են՝ 0.1%-ով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել 2022թ. շահույթների, ներմուծման, սպառման և աշխատավարձերի աճերով: Հարկային եկամուտների աճին հակազդել է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի աճը, որի ծավալը 2022թ. 36.5 մլրդ դրամից 2023թ. հասել է 51.9 մլրդ դրամի: Եթե այս բաղադրիչը գումարենք հարկային եկամուտներին, ապա աճը կդառնա 15.9%:


Աղյուսակ 2. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.				
	Փաստացի	Պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %	Աճը 2022թ. համեմատ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	2,063.1	2,302.0	2,356.9	2,358.8	100.1	14.3
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,926.0	2,203.7	2,224.8	2,221.9	99.9	15.4
Պաշտոնական դրամաշնորհներ	15.0	17.2	12.3	13.1	106.3	-12.5
Այլ եկամուտներ	122.1	81.1	119.8	123.7	103.3	1.3

Հարկերը և տուրքերը 2023թ. կազմել են ՀՆԱ-ի 23.4%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.7 տոկոսային կետով: Ընդ որում, 2023թ. համար բյուջեով պլանավորվել էր ունենալ 23.7% հարկեր/ՀՆԱ-ի ցուցանիշ, մինչդեռ փաստացի ցուցանիշը փոքր է դրանից 0.3 տոկոսային կետով: Դա պայմանավորված է մի կողմից՝ 2022թ. հարկեր/ՀՆԱ-ի սպասվածից ավելի փոքր մակարդակի արձանագրմամբ (22.7%՝ 23.2%-ի փոխարեն), մյուս կողմից՝ սպասվածից ավելի բարձր ՀՆԱ-ի աճով, որը, ինչպես վերևում նշեցինք,

հիմնականում պայմանավորված է տարեվերջին ոսկերչական գործունեության կտրուկ և անսպասելի աճով: Եթե եկամտային հարկի վերադարձը նույնպես ներառենք հարկային եկամուտներում, ապա հարկեր/ՀՆԱ-ի աճը կկազմի 0.8 տոկոսային կետ:


Գծապատկեր 2. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան վերջին տարիներին



Հարկային եկամուտների աճին առավել մեծ չափով նպաստում են ունեցել շահութահարկը, ԱԱՀ-ն և եկամտային հարկը՝ համապատասխանաբար 5.1, 4.5 և 4.1 տոկոսային կետի չափով: Իսկ պետական տուրքի և բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը տարվա ընթացքում նվազել են՝ հարկային եկամուտների աճին հակազդելով համապատասխանաբար 2.0 և 1.8 տոկոսային կետով:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը հիմնականում պայմանավորված է եղել շահութահարկի գծով մուտքերի աճով, որը շուրջ 0.8 տոկոսային կետով բարելավել է հարկեր/ՀՆԱ ցուցանիշը: Սա հիմնականում պայմանավորված է 2022թ. բանկային համակարգում շահույթների կտրուկ աճով, որոնց գծով շահութահարկի զգալի մասը վճարվել է 2023թ. սկզբում: Մյուս հարկատեսակները նույնպես նպաստել են հարկեր/ՀՆԱ-ի աճին, բացառությամբ պետական տուրքի և բնապահպանական և բնօգտագործման վճարների, որոնցից յուրաքանչյուրը շուրջ 0.5 տոկոսային կետով բացասական ազդեցություն է ունեցել հարկեր/ՀՆԱ-ի վրա:

Գծապատկեր 3. Հարկային եկամուտների աճին նպաստումները և ՀՆԱ-ի նկատմամբ փոփոխությունը 2023թ.




3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

3.1. Ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման

2023 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,547.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.6%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 2,075.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.4%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 472.6 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 494.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 27%-ով: Արդյունքում բյուջեի ծախսերի կառուցվածքը 2023թ. բարելավվել է: Ընթացիկ ծախսերի (առանց կառավարության պարտքի սպասարկման գծով տոկոսավճարների) տեսակարար կշիռը նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 71.5%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռն աճել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 18.6%: Միևնույն ժամանակ, զգալիորեն աճել է կառավարության պարտքի սպասարկման գծով տոկոսավճարների տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում՝ հասնելով 9.9%-ի՝ նախորդ տարվա 8.8%-ի դիմաց, լինելով վերջին տարիների ընթացքում ամենաբարձր կետում (չնայած նրան, որ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն իր առավելագույն կետում չէ):

Գծապատկեր 4. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման



Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2022 թվականի համեմատ ավելացել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 26.8%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 0.07 տոկոսային կետով՝ կազմելով 21.8%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռն աճել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 5.0%: Վերջինիս կազմում կապիտալ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ ավելացել են 0.63 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 5.2%-ը:

Ընդհանուր ծախսերի կատարողականը փոքր-ինչ վատթարացել է նախորդ տարվա համեմատ, մինչդեռ կապիտալ ծախսերինը՝ բարելավվել է: 2023թ. ընթացքում հաջողվել է իրականացնել բյուջեի ճշտված պլանով նախատեսված ծախսերի 97.1%-ը (նախորդ տարվա կատարողականը՝ 98.0%), որի կազմում ընթացիկ ծախսերի կատարողականը կազմել է 97.3% (նախորդ տարվա կատարողականը՝ 98.6%), իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններինը՝ 96.1% (նախորդ տարվա կատարողականը՝ 95.1%):

Ընթացիկ ծախսերի կազմում թերակատարումներ են նկատվում բոլոր ծախսային հոդվածների գծով, որոնցից համեմատաբար մեծ չափ ունեն «Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում», «Դրամաշնորհներ» և «Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ» ծախսատեսակները, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 96.2%, 96.3% և 97.6%: Սակայն պետք է նշել, որ վերջին երկուսի դեպքում տարվա նախնական պլանը վերանայվել է դեպի վերև, և այդ վերանայվածի համեմատ է արձանագրվել թերակատարում, իսկ տարվա նախնական պլանի համեմատ առկա է գերակատարում: «Դրամաշնորհներ» և «Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ» ծախսատեսակների գծով արձանագրվել է նաև զգալի աճ

Նախորդ տարվա փաստացի ցուցանիշի համեմատ՝ համապատասխանաբար 17.8% և 15.8%:

2023 թվականին կապիտալ ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 95.8%՝ նախորդ տարվա 94.9%-ի համեմատ բարելավվելով 0.9 տոկոսային կետով, մինչդեռ պետական բյուջեի տարեկան պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 88.6%: Հատկանշական է, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը (առանց պետական բյուջեի համաֆինանսավորման) ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 92.5%, իսկ բյուջեի նախնական պլանային ցուցանիշի նկատմամբ կազմել է ընդամենը 58.9%: Կատարողականի համեմատաբար ցածր ցուցանիշները ցույց են տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ


Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	2022	2023				
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2022թ. համեմատ
Ընդամենը ծախսեր	2,242.6	2,591.0	2,624.7	2,547.6	97.1%	13.6%
Ընթացիկ ծախսեր	1,862.2	2,043.2	2,132.9	2,075.1	97.3%	11.4%
Աշխատանքի վարձատրություն	194.1	211.3	220.5	218.0	98.9%	12.3%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	205.3	200.3	198.6	191.1	96.2%	-6.9%
Տոկոսավճարներ	198.3	272.9	256.4	253.4	98.8%	27.8%
Սուբսիդիաներ	150.5	151.5	165.2	164.0	99.3%	9.0%
Դրամաշնորհներ	238.6	268.4	291.8	281.0	96.3%	17.8%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	613.1	659.8	727.7	710.2	97.6%	15.8%
Այլ ծախսեր	262.4	278.9	272.6	257.2	94.4%	-2.0%
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	380.4	547.7	491.9	472.6	96.1%	24.2%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	389.1	557.7	516.1	494.4	95.8%	27.0%

Հիմնական միջոցներ	389.1	557.6	515.9	494.2	95.8%	27.0%
Շենքեր և շինություններ	341.9	498.8	462.2	446.6	96.6%	30.6%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	41.3	46.1	43.6	39.2	90.0%	-5.1%
Այլ հիմնական միջոցներ	5.8	12.8	10.1	8.4	83.0%	44.6%
Չարտադրված ակտիվներ	0.0	0.1	0.2	0.1	85.6%	847.3%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(8.7)	(10.0)	(24.2)	(21.8)	89.8%	149.4%

3.2. Ծախսերն ըստ գործառնական դասակարգման

Բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ գործառնական դասակարգման 2023թ. նույնպես որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես, էականորեն աճել է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 18.2%-ից դառնալով 20.5%, ինչը առավելապես պայմանավորված է պետական պարտքի գծով գործառնությունների (հիմնականում՝ տոկոսավճարների) շուրջ 27.8% աճով: Որոշակիորեն աճել է նաև սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերի կշիռը, սակայն նվազել են պաշտպանությանը, առողջապահությանը և անվտանգությանն ուղղվող ծախսերի կշիռները:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման



2022թ. համեմատ ծախսերի աճը հիմնականում եղել է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (հիմնականում՝ պարտքի տոկոսավճարների) և սոցիալական պաշտպանության ծախսերի աճի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 28.2%-ով և 14.9%-ով և ապահովել են ծախսերի աճի համապատասխանաբար 5.1 և 4.1 տոկոսային կետը: Չնայած տեսակարար կշռի նվազմանը, ծախսերի աճին նշանակալի նպաստում է ունեցել նաև պաշտպանության ոլորտի ծախսերի 9.5% աճը, որի նպաստումը ծախսերի աճին կազմել է 2.0 տոկոսային կետ: Սոցիալական պաշտպանության ոլորտում զգալի աճ է գրանցվել ծերության նպաստների և այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության ծախսերի գծով, որոնք կապված են նաև Արցախից բռնի տեղահանված բնակչությանը տրամադրված աջակցությամբ:

Միևնույն ժամանակ, զգալի աճեր են գրանցվել դատական գործունեություն և իրավական պաշտպանության, դատախազության և նախաքննության ուղղությամբ իրականացվող ծախսերի գծով՝ համապատասխանաբար 21.7%, 42.2% և 57.1%, որոնց գծով ընդհանուր ավելի կատարված ծախսերը կազմել են 14.2 մլրդ դրամ:

Առողջապահության ոլորտի, ինչպես նաև հանգստի, մշակույթի և կրոնի գծով ծախսերը 2023թ. նվազել են նախորդ տարվա համեմատ՝ համապատասխանաբար 0.6%-ով և 1.3%-ով: Առողջապահության ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է հանրային առողջապահական ծառայությունների գծով ծախսերի նվազմամբ, իսկ հանգստի, մշակույթի և կրոնի գծով ծախսերի նվազումը՝ ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների, հեռուստառադիոհաղորդումների գծով ծախսերի նվազմամբ:

Գործառնական դասակարգման բոլոր հոդվածների գծով առկա է ծախսերի թերակատարում, որոնցից առավել մեծ չափեր ունեն շրջակա միջավայրի պաշտպանությանը, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններին, ինչպես նաև կրթությանն ուղղվող ծախսերի թերակատարումները, որոնք կազմել են համապատասխանաբար 18.1%, 6.4% և 5.6%:

Հատկանշական է, որ ծախսերի կառուցվածքում առավել զգալի թերակատարումներ են նկատվում հետազոտական և նախագծային աշխատանքների, այսինքն՝ երկարաժամկետ զարգացմանն ուղղված աշխատանքների գծով: Մասնավորապես, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների կառուցվածքում շուրջ 12.9%-ով թերակատարվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերը, պաշտպանության ոլորտում շուրջ 38.7%-ով թերակատարվել են «հետազոտական և նախագծային աշխատանքներ

պաշտպանության ոլորտում» աշխատանքները և 19.8%-ով՝ «տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքները»:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման, մլրդ դրամ

	2022	2023				
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2022թ. համեմատ, %
Ընդամենը ծախսեր	2,242.6	2,591.0	2,624.7	2,547.6	97.1%	13.6%
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	407.4	513.1	536.1	522.5	97.5%	28.2%
Պաշտպանություն	480.4	520.5	527.3	525.9	99.7%	9.5%
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	196.9	202.7	212.9	207.6	97.5%	5.4%
Տնտեսական հարաբերություններ	175.8	239.3	205.6	199.2	96.9%	13.3%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	6.8	9.4	9.4	7.7	81.9%	13.3%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	9.5	19.0	11.6	10.9	93.6%	15.0%
Առողջապահություն	142.2	149.0	145.5	141.3	97.1%	-0.6%
Հանգիստ, մշակույթ և կրոն	43.9	36.4	45.2	43.3	95.8%	-1.3%
Կրթություն	165.4	211.9	194.5	183.6	94.4%	11.0%
Սոցիալական պաշտպանություն	614.5	653.5	724.0	705.8	97.5%	14.9%
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	-	36.2	12.6	-	0.0%	

3.2. Ծախսերն ըստ ծրագրային դասակարգման

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 172 ծրագրերի իրականացում, որը տարվա ընթացքում իրականացված ճշտումների արդյունքում դարձել է 176, իսկ փաստացի միջոցներ է հատկացվել 171-ի գծով: Պետական բյուջեի փաստացի ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռները՝ 27.7% և 20.7%, ունեցել են համապատասխանաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերը:

Ճշտված ծրագրի նկատմամբ փաստացի ծախսերի շեղումը կազմել է 77.1 մլրդ դրամ, որը հիմնականում արձանագրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (18.3 մլրդ դրամ), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (14.2 մլրդ դրամ), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (5 մլրդ դրամ), ՀՀ առողջապահության (4.1 մլրդ դրամ), ՀՀ ֆինանսների (3.6 մլրդ դրամ), ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության (3.3 մլրդ դրամ) և ՀՀ էկոնոմիկայի (2.7 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

2023թ. բյուջեի կատարողականն ընդհանուր առմամբ բարելավվել է նախորդ տարվա համեմատ: Որոշ ծախսերի գծով առկա է կատարողականի բարձր մակարդակ, մինչդեռ որոշ կարևոր ծրագրերի կատարողականներ բավական ցածր են եղել:

Մասնավորապես, բարձր կատարողական արձանագրած ծախսերից կարող ենք նշել հանրային իրազեկման ծրագրի ծախսերը, որոնք կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ և ապահովել 99.4% կատարողական, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 22.1%-ով: Այս ծրագիրը ուղղված է հիմնականում իրականացվող քաղաքականության վերաբերյալ նյութերի պատրաստմանը և հրապարակմանը, ինչպես նաև «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավմանը: Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրերը նույնպես իրականացվել են բարձր՝ 99.5% կատարողականով:

Նախորդ տարվա համեմատ ՀՀ դատախազության ծախսերն աճել են 39.3%-ով կամ շուրջ 2.9 մլրդ դրամով՝ պայմանավորված քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 43.5% (2.8 մլրդ դրամ) և փորձաքննության ծառայությունների տրամադրման ծախսերի 15.5% (113.7 մլն դրամ) աճով, որոնք նույնպես կատարվել են 99.5% կատարողականով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ իրականացված ծրագրերն ունեն համեմատաբար ավելի ցածր կատարողական: 2023 թվականի ընթացքում այս նախարարության կողմից կատարվել է պետական բյուջեի 21 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են շուրջ 270 մլրդ կամ ծրագրված ցուցանիշի 98.2%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Ճանապարհային ցանցի բարելավման և Քաղաքային զարգացման ծրագրերի կատարողականով: 2023 թվականին 2022 թվականի համեմատ ծախսերը աճել են 20.9%-ով (46.6 մլրդ դրամով), ինչը հիմնականում պայմանավորված է Տարածքային զարգացման և Ճանապարհային ցանցի բարելավման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման միջոցառման շրջանակներում 2023 թվականին իրականացվել են առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող 355.7 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման, կառուցման և վերակառուցման աշխատանքներ, որից 305.7 կմ (միջպետական՝ 105 կմ, հանրապետական՝ 103 կմ, մարզային՝ 97.7 կմ) ճանապարհային պատվածքն ամբողջությամբ իրականացված է, իսկ 50 կմ-ը՝ իրականացված է ասֆալտբետոնե ներքին շերտով: Մնում է հուսալ, որ նշված աշխատանքներն իրականացվել են բավարար որակով: Ընդհանուր առմամբ միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 95.8%-ը՝ 59.7 մլրդ դրամ: Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ դեկտեմբերին անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով որոշ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների ընթացքը դանդաղել է, և նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չեն ավարտվել: 2022 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 24.9%-ով (11.9 մլրդ դրամով), ինչը պայմանավորված է ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների ծավալների աճով:

Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ ուսումնասիրելիս կարող ենք նկատել, որ որոշ կարևոր ծախսերի գծով առկա են էական թերակատարումներ: Մասնավորապես, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում (այն նախատեսում է ճանապարհային հանգույցների և ավտոբուսների դեպոների կառուցում) ծախսերը կազմել են շուրջ 2.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 72.6%-ը: Քաղաքային զարգացման ծրագրի շրջանակներում 2023 թվականի ընթացքում օգտագործվել է 17.2 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 88.6%-ը՝ հիմնականում պայմանավորված ԱԶԲ աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի և Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգման ծախսերի կատարողականով: Գյուղական

Ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի գծով նախատեսված 633.9 մլն դրամը տարվա ընթացքում ճշտվել է դեպի ներքև՝ դառնալով 74.5 մլն դրամ, սակայն փաստացի կատարվել է ընդամենը 66.6 մլն դրամը: Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների գծով նախատեսված 6.8 մլրդ դրամը ճշտված պլանով նվազեցվել է մինչև 1.8 մլրդ դրամ, որը, սակայն, նույնպես զգալիորեն թերակատարվել է՝ 40.2%-ով: «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում (այն ուղղված է հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավմանը) նախատեսված 15.2 մլրդ դրամը թերակատարվել է շուրջ 23.9%-ով: Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի գծով հատկացված գումարները թերակատարվել են 28.4%-ով:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2023 թվականին սպասվածից ավելի բարձր տնտեսական աճի և ծախսերի թերակատարման պայմաններում պետական բյուջեի պակասուրդը եղել է պլանավորվածից էականորեն ավելի ցածր՝ կազմելով 188.9 մլրդ դրամ՝ բյուջեով պլանավորված 288.9 մլրդ դրամի փոխարեն, և 2022թ. համեմատ աճելով 5.2%-ով: Պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 2.0%՝ բյուջեով պլանավորված 3.1%-ի փոխարեն:

Պլանավորվածի համեմատ էականորեն ավելացել է պակասուրդի ֆինանսավորումը ներքին աղբյուրների հաշվին՝ 302.8-ի փոխարեն կազմելով 412.3 մլրդ դրամ, միևնույն ժամանակ էականորեն աճել է արտաքին պարտքի մարման չափը՝ նախատեսված 13.9 մլրդ դրամից դառնալով 223.5 մլրդ դրամ: Վերջինս պայմանավորված է 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերի՝ կառավարության կողմից վաղաժամ մասնակի հետգնման գործարքի իրականացմամբ:


Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը

	2022	2023		
	Փաստ.	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.
Մլրդ դրամ				
Բյուջեի պակասուրդ	179.5	288.9	267.8	188.9
Ներքին աղբյուրներ	288.1	302.8	429.7	412.3
Փոխառու զուտ միջոցներ	252.0	295.2	384.9	360.3
Ֆինանսական զուտ ակտիվներ	36.1	7.6	44.8	52.1
Արտաքին աղբյուրներ	-108.6	-13.9	-161.9	-223.5
Փոխառու զուտ միջոցներ	66.2	123.4	-8.7	-73.3
Ֆինանսական զուտ ակտիվներ	-174.8	-137.3	-153.2	-150.2
<i>Վարկերի և փոխադրվածությունների տրամադրում, այդ թվում՝</i>	-176.0	-136.0	-151.0	-151.0
<i>Միջպետական վարկ Արցախի Հանրապետությանը</i>	-176.0	-136.0	-151.0	-151.0
% ՀՆԱ-ում				
Բյուջեի պակասուրդ	2.1	3.1	-	2.0
Ներքին աղբյուրներ	3.4	3.3	-	4.3
Փոխառու զուտ միջոցներ	3.0	3.2	-	3.8
Ֆինանսական զուտ ակտիվներ	0.4	0.1	-	0.5
Արտաքին աղբյուրներ	-1.3	-0.1	-	-2.4
Փոխառու զուտ միջոցներ	0.8	1.3	-	-0.8
Ֆինանսական զուտ ակտիվներ	-2.1	-1.5	-	-1.6
<i>Վարկերի և փոխադրվածությունների տրամադրում, այդ թվում՝</i>	-2.1	-1.5	-	-1.6
<i>Միջպետական վարկ Արցախի Հանրապետությանը</i>	-2.1	-1.5	-	-1.6

Պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքը արտացոլվել է նաև պարտքի դինամիկայում: Այսպես, դրամով արտահայտված ներքին պարտքի ծավալը 2023թ. դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել է 31.1%-ով, իսկ արտաքին պարտքի ծավալը՝ արտահայտված դոլարով, նույն ժամանակահատվածում աճել է ընդամենը 1.0%-ով: ՀՀ կառավարության ընդհանուր պարտքը, դոլարային արտահայտությամբ, 2023թ. աճել է 12.0%, իսկ դրամային արտահայտությամբ՝ 15.2%-ով:

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2023թ. աճել է 1.4 տոկոսային կետով, որին 3.5 տոկոսային կետով նպաստել է պետական բյուջեից զուտ վարկավորումը, 1.6 տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը, 1.6 տոկոսային կետով՝ իրական տոկոսադրույքի աճը: Պարտքի աճին հակազդել են տնտեսական աճը (3.6 տոկոսային կետ) և բյուջեի առաջնային հավելուրդը (0.7 տոկոսային կետ):

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պարտքի և պակասուրդի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

2023թ. ՀՀ տնտեսությունում դեռևս պահպանվել են 2022 թվականին բարձր աճ ապահովող արտաքին գործոնների ազդեցությունները (թեև որոշակի նվազում արձանագրելով), ինչպես նաև առաջացել են նոր՝ աճի վրա դրականորեն ազդող գործոններ, ինչի արդյունքում տնտեսական աճը եղել է ավելի բարձր, քան կանխատեսվում էր կառավարության կողմից: ՀՀ տնտեսական աճը կազմել է 8.7%, այն դեպքում, երբ բյուջեի հիմքում դրված սցենարում թիրախավորվել էր 7.0%, իսկ տարվա ընթացքում այն վերանայվել էր դեպի վերև՝ հասնելով 7.4%-ի: Բարձր տնտեսական աճը, բնականաբար, դրական երևույթ է հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից, քանի որ մի կողմից՝ սպասվածից ավելի շատ եկամուտ է ձևավորվում՝ թույլ տալով ավելի մեծ ծախսեր իրականացնել, մյուս կողմից՝ ավելանում է հարկաբյուջետային տարածքը՝ պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազման հաշվին:

Այդուհանդերձ, 2023թ. արագացված տնտեսական աճն այդքան էլ «որակյալ» չէր ինչպես հարկաբյուջետային քաղաքականության, այնպես էլ երկարաժամկետ կայունության տեսանկյունից: 7.4% կանխատեսման և 8.7% փաստացի աճերի միջև մեծամասամբ ընկած է նույնաբեր-դեկտեմբեր ամիսներին կտրուկ աճ գրանցած ոսկերչական գործունեության ազդեցությունը: Վերջինս հիմնված է արտաքին գործոնների վրա, որոնք ժամանակավոր են և ցանկացած պահի կարող են կտրուկ փոխվել: Թեև այդ գործունեությունը շարունակվում է նաև 2024 թվականին, այն պետք է դիտարկել որպես կարճաժամկետ երևույթ և միջոցներ ձեռնարկել տնտեսության մյուս հատվածների վրա հնարավոր բացասական ազդեցությունները չեզոքացնելու համար: Հարկաբյուջետային դրական ազդեցություն այդ գործունեության տեսակը ևս չի ունեցել, քանի որ չի նպաստել հարկային եկամուտների ավելացմանը:

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը հաշվետու տարում բավական կտրուկ բարելավվել է՝ 22.7%-ից դառնալով 23.4%: Սակայն այստեղ նույնպես առկա է ժամանակավոր երևույթ, մասնավորապես՝ 2022թ. բանկային համակարգում գրանցված շահույթների կտրուկ աճի արդյունքում 2023թ. վճարված շահութահարկը, որը նպաստել է հարկեր/ՀՆԱ-ի բարելավմանը շուրջ 0.8 տոկոսային կետով: Շահույթների աճը 2023թ. չի շարունակվել նույն կերպ, ինչը հուշում է, որ դա նույնպես ժամանակավոր է, և 2024թ. նույն չափով բարելավում գրանցելը խնդրահարույց կլինի:

Կապիտալ ծախսերի կատարողականը շարունակում է էական խնդիր մնալ, հատկապես արտաքին ֆինանսավորմամբ ծախսերի պարագայում, թեև ընդհանուր կապիտալ ծախսերի կատարողականը որոշակիորեն բարելավվել է

Նախորդ տարվա համեմատ: 2023 թվականին կապիտալ ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 95.8%՝ նախորդ տարվա 94.9%-ի համեմատ բարելավվելով 0.9 տոկոսային կետով, մինչդեռ պետական բյուջեի տարեկան պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 88.6%: Հատկանշական է, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը (առանց պետական բյուջեի համաֆինանսավորման) ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 92.5%, իսկ բյուջեի նախնական պլանային ցուցանիշի նկատմամբ կազմել է ընդամենը 58.9%: Սա ցույց է տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Մի շարք կարևոր ծրագրերի գծով գրանցվել են էական թերակատարումներ: Մասնավորապես, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (այն նախատեսում է ճանապարհային հանգույցների և ավտոբուսների դեպոների կառուցում), քաղաքային զարգացման ծրագրի, գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման, պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների, «Ապահով դպրոց» և այլ ծրագրերի գծով գրանցվել է ավելի քան 10%, որոշ դեպքերում ավելի քան 20-30% թերակատարումներ: Այս երևույթը բնականաբար իր բացասական հետևանքները կունենա երկարաժամկետում՝ հաշվի առնելով այն, որ նշվածները հիմնականում զարգացմանն ուղղված ծրագրեր են:

Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը աճել է՝ չնայած նրան, որ պակասուրդ/ՀՆԱ-ն նվազել է: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2023թ. աճել է 1.4 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված պետական բյուջեից զուտ վարկավորման աճով, ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկմամբ և իրական տոկոսադրույքի աճով: Տարվա ընթացքում պարտք/ՀՆԱ-ն նվազեցնող գործոններ են եղել տնտեսական աճը և պակասուրդի նվազումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: